

Մեր զորութիւնը ներքին է, բնազդ է, կամք է, եւ պայքարի սէր: Թող այսօր արդարութիւնը զինաթափ ըլլայ, պարտուած մնայ միջազգային սեղաններու առջեւ. թող խաղաղութիւն եւ ազատութիւն քարոզեն կեղծ առաքեալներ. մենք կը հաւատանք եւ կը հետեւինք Ե. Չարենցի խօսքին — ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՔՈՒ ՓՐԿՈՒԹԻՒՆԵՂ՝ ՍԵՓԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒԴ ՄԷՋՆ Է: Ոչ ծախու ապրանք ենք, ոչ փողոցներու մէջ կեանք մուրացող: Մենք կանք աշխարհի վրայ ամենասուրբ իրաւունքով, պիտի ապրինք աւելի փառաւոր էջերով: Պատմութիւնը Նահատակներուն փառքը կը հիւսէ, իսկ դահիճներու երեսին խոշոր ափ մը ցեխ կը նետէ: Թերեւս անցնին շատ ժամանակներ. պատմութիւնը տարիներու հոլովում չէ, այլ վերելքի ճանապարհ է:

Յիսուն տարիներ առաջ մէկ ու կէս միլիոն խաչեալներ ճամբայ ինկան արիւնոտ Գողգոթայէ մը եւ կը քալեն դէպի յարութեան լեռը. իրենց առջեւէն կ'երթայ լուսաւոր խաչը, մեր դարաւոր փառքի զինանշանը, որուն մէկ փողբիկ ցոլքն ինկաւ այստեղ, Մխիթարի յարկին տակ, աստղի պէս ճառագայթող, յոյսի պէս կենդանի: Չեմ գիտեր ո՞ր հրեշտակը բերաւ Արարատի կողէն փերթած այս խաչը, որ հոս Ս. Ղազարի մէջ միշտ փայլի եւ խօսի անցորդ օտարականին՝ թէ այս հրաշատեսիլ կղզին ստեղծող ժողովուրդը, ասկէ յիսուն տարիներ առաջ արիւնոտ խաչին վրայ դրին, տարին եւ անապատներու մէջ թաղեցին, նետեցին ծովերու ալիքներուն մէջ, եղունդներով քերթեցին կոթողներու վրայէն անոր անունը եւ ուղեցին մոռնալ. բայց ան յիսուն տարիներ վերջ յարութիւն առաւ Նահատակի սպիտակ պատմութեանով եւ այսօր արդարութիւն եւ հատուցում կը պահանջէ անարդար աշխարհէն:

Ո՛վ օտարական, որ դժայլած կը շրջիս այս դեղարուեստի վայրին մէջ, դնա՛, պատմէ՛ քու ժողովուրդիդ՝ թէ հոն հրաշք մը տեսար. արեւելցի փողբիկ ժողովուրդ մը, Հայ ազգը, որ իր մահով կը ստեղծէ անմահական դեղեցկութիւններ, եւ ամէն օր կը վերածնի արշալոյսին պէս Արարատի դաւաթին: Տեսար հին հաւատք մը խորհրդանշող խաչ մը, որ է ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Բանախօսուած Ս. Ղազարի մէջ, խաչքար-յուշարձանի բացման օրը, 1965ի Ապրիլ 19ին:

ԼԱՅՐԵՆԵ ԼՐԱՆԵՐ

Մօտեցի՛ր, քոյր, եւ դուն եղբայր, տարագիր.
Այս առաւօտ մենք միասին պիտ'երթանք
Խնոյքներու եւ հարսնիքի մը կարմիր.
Պիտի հիւսնեմ հին օրերու դրասանգ:

Դուն հարս եղիր, Արմենուհի քեզ կոչեմ,
Եւ դուն փեսայ վարդի բոք անունով.
Բաժակ պարպեմք կոյս փրփուրով իրար դէմ,
Եւ քոյր ըլլան կանչերը մեր կատաճ ծով:

Հոգիներու հարսանիք է մեզ այսօր
Մեր հայրենի դաշտերուն մէջ արիւնտ.
Մօտեցի՛ր, քոյր, ա՛ն քու շրջապատը աղաւթ,
Եւ կուսութիւնդ պարզէ դէմքիդ առաւօտ:

Մօտեցի՛ր դու, աստուածներու սուրբ գաւակ,
Թող ընկերենք քեզ ըստուերներ, մրրիկներ.
Արեւածին վահագն եղիր հերարձակ,
Բեր մեզի հուր, երկինքներէն կայծակ բեր:

Ելի՛ր, քոյր իմ, արեւուն հետ հայրենի,
Ժողովեմք կարմիր արեւագոյն կակաչներ,
Այսօր տօն է, անապատէն կը հասնի
Թափօր մը սուրբ, հագարներով հագարներ:

Բայց ո՛վ եմ որ կու գամ հրապարտ շարքերով,
Ջահեր բռնած, որ արեւու բոց ունին,
Կու գամ ցնծուն, նահատակի տեսիլով
Կոյսեր շուշան, մայրը գրկած իր որդին:

Մարմինի տեղ՝ լոյսն է հանդերձ ըսպիտակ.
Ու բազուկներ, որոնք մանանչ կը քրչին.
Տե՛ս, քոյր իմ, տես, աչքերն իրենց շողարձակ,
Հայրենական արեւներու բոցն ունին:

Ես կը լըսեմ յարութեան երգն որոտուն,
Ի՞նչ արձագանգ եւ հովերու պատասխան.
Այսպէս կ'ըլլայ մարտն յաղթական փառքերուն.
Ելի՛ր, վարդի, մեր անմահները կու գան:

Բա՛ց դէմքդ, փոյր, ինչպէս գարնան առաւել.
Այսօր տօն է, եւ հարսանիք է կարմիր.
Օծէ աչքերդ մանուշակով փաղցրահոտ
Եւ հայրենի գեղեցկութիւնդ ըզգեցիր:

Պիտի անցնինք հորիզոնէ հորիզոն
Հին օրերու քափօրի պէս փրմական,
Պիտի հիւսեմք աստուածային նոր գեղօն.
Խնկարկելով տենչերը մեր պատարագ:

Մօտեցի՛ր, փոյր, եւ դուն եղբայր Վրէժի,
Մասիններու կոյս կատարին եմք հիմա.
Հոն ծիածանն է դրօշակ հայրենի
Որ անըստուեր արեւուն հետ կը խաղայ:

Հոն չեն ցօղեր աստղերն արցունք մշտնջեան,
Լոյսին մէջ լոյս, լոյսն է լոյսին պարունակ
Հոն աղանին, Աստուծոյ ձեռքը վրբան,
Կը քեւածէ խաղաղութեան հրեշտակ:

Բա՛ց քեւերդ փոյր, մեր օրերու պարուհի,
Եւ դուն եղբայր, կապէ գէնքերդ փառքի.
Այսօր տօն է, կարմիր խնոյք հարսնիքի,
Յարութեան սուրբ պատարագն է հաւատքի:

Մեր հողն է սուրբ՝ դարձեալ խորան երկնային,
Արեւն է ջահ, երգն է բամբիւ վաղեմի.
Հոս չի մեռնիր, այլ կը ծընի վերստին
Հայու հոգին, հուր դառնալով աւելի:

Այգիներէն կ'ուռնանայ նոր որթատունկ,
Կակաչներն են լի բաժակներ բիրեղեղայ,
Այսօր տօն է եւ Հայութեան սուրբ կրնունք,
Մեարայ Մաշքոց՝ մեր ուխտն օրհնող փահանայ:

Ո՛րքան բերկրանք եւ մարգարիտ կը շողան,
Մեր հանդերու հասկերուն մէջը ծոցուոր,
Երդիւքներէն ծուխերն երգով կը ցնծան,
Նոր արեւու շողերուն հետ մեղրածոր:

Պըսակուէ՛, փոյր, այսօր տօն է մեզ համար,
Վարդը վարդին համբոյր կու տայ, կը ժպտի.
Սոխակներուն երգն աւելի սիրավատ,
Մեր տենչերուն բոցուտ սրտի գոյնն ունի:

Ջարդարուէ՛, փոյր, արտերուն պէս ցորենուտ,
Հագար մանեակ անցուր վրդիդ կարապի.
Դիր սուրբ հինայ ոսկեծրդի մատներուդ,
Եղիւր կրկին Արմենուհի սիրելի:

Ահա կու գան Նահատակներ շար ի շար,
Նարօտ կապած ծիածանի գոյներով.
Ահա կու գան բազուկներով ջահավատ,
Երկու մեղքած ակեղծուած կարմիր ծով:

Վաղորդուէ՛, փոյր, կոյսերուն հետ նահատակ,
Եւ ես տեսնեմ հեգանքերուն պարը ձեր.
Թի՛ղ պարն ըլլայ նոր Վրէժի յաղթանակ,
Վախումն համար՝ հայրենի սուրբ հրբաւեր:

ՎԵՆԵՐԻԿ, 24 Ապրիլ, 1965

ՎԱՆԱՏՈՒՐ

ՄԵՐ ԿԱՆԹԵՂԸ

Մէկուկէս միլիոն նահատակներու յի-
շատակը սարսուռով եւ հպարտութեամբ
կը լեցնէ մեր սրտերը:

Սարսուռով, երբ կը նկատենք ահաւոր
ու քստմնելի չարչարանքները, խոշտան-
դումները մեր խանդավառ մտաւորական-
ներուն, մեր հաւատարիմ մայրերուն ու
փախկաւորներուն կոյսերուն, մեր արեւակէզ ու
շինարար մշակներուն, երբ կը վերստին
անյիշելի տառապանքն ու հեծեծանքը մեր
ծձկեր մանկիկներուն եւ զոյգըմուն ծերե-
րուն, որոնք անդերեղման ինկան անապա-
տի աւազուեղին, կամ գետերու ժայռերն
ի վար զլորեցան, արդարութեան ծարա-
ւով:

Բայց այդ սարսուռը յուսահատական ա-
ղաղակ մը այժմ չէ որ կը խլէ մեր կուրծ-
քերէն, այլ հպարտութեան, արդար հը-
պարտութեան զգացումով մըն ալ կը հա-
մակէ մեր էութիւնը, ի տես մեր ժողո-
վուրդի աննկուն նկարագրին եւ անսասան
հաւատքին:

Անյիշատակ ժամանակներէ, մեր երկրին
կրանիտ ժայռերէն վաւեր մըն ալ ինչպէս
մեր հողիէն ներս: Արարատի պարիսպը կո-
ղերէն, Սասունի եւ Տուրքիոյ քարածայ-
ռերէն ծնած են առիւծասիրտ մեր քաջե-
րը, որոնց զօրը խաչանիշ, ամպերուն վը-
րայ ոսկեծածան, դարերով փառքերն է
հիւսած մեր հայրենիքին: Դիւցազներ ի-